

ՊԱՐԵՏԻ ՈՐՈՇՈՒՄ N 224-Ա

29 հուլիսի, 2020 թվական

ՄԻ ՇԱՐՔ ՏՆՏԵՍՎԱՐՈՂՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԿԻՐԱՌՎՈՂ ՍԱՀՄԱՆԱՓԱԿՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետությունում արտակարգ դրություն հայտարարելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության 2020 թվականի մարտի 16-ի №298-Ն որոշման 2-րդ, 6-րդ և 7-րդ կետերով և որոշման հավելվածի 20-րդ կետով, ինչպես նաև հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության սննդամթերքի անվտանգության տեսչական մարմնի ղեկավարի 2020 թվականի հուլիսի 27-ի 1127-Ա, N 1132-Ա, N 1133-Ա և N 1134-Ա հրամանների հիման վրա 2020 թվականի հուլիսի 28-ին իրականացված մշտադիտարկումների արդյունքում կազմված արձանագրությունները՝

1. 24 ժամով արգելել հետևյալ տնտեսվարողներին պատկանող մասնաճյուղերի (հասցեներում իրականացվող) գործունեության ծավալումը՝

- 1) Ա/Ձ «Կարինե Հարությունյան», Արմավիրի մարզ, գ. Դալարիկ (ՀՎՀՀ 49563066).
- 2) Ա/Ձ «Նորայր Սարգսյան», Սյունիքի մարզ, Սիսիան համայնք, Որոտան 1բ (ՀՎՀՀ 79814682).
- 3) Ա/Ձ «Արսեն Հակոբյան», Վայոց ձորի մարզ, գ. Մալիշկա (ՀՎՀՀ 76848151).
- 4) Ա/Ձ «Վլադիմիր Ստեփանյան», Տավուշի մարզ, գ. Ոսկեպար, փող., 3, շ. 20, (ՀՎՀՀ 71005073).
- 5) Ա/Ձ «Լաուրա Մախսուդյան», Տավուշի մարզ, գ. Ոսկեպար (ՀՎՀՀ 70918041).
- 6) Ա/Ձ «Կարեն Ամիրադյան», Տավուշի մարզ, ք. Նոյեմբերյան (ՀՎՀՀ 71024214):

2. Հայաստանի Հանրապետության սննդամթերքի անվտանգության տեսչական մարմնի ղեկավար Գեորգի Ավետիսյանին՝ ապահովել տնտեսվարողներին սույն որոշման մասին տեղեկացումը:

3. Տնտեսվարողի գործունեությունը արգելվում է տեղեկացման պահից:

4. Հայաստանի Հանրապետության ոստիկանության պետ Վահե Ղազարյանին՝ ապահովել սույն որոշման 1-ին կետի պահանջների կատարման նկատմամբ ամբողջական վերահսկողությունը:

5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

 Recoverable Signature

X 

VERIFIED OCSP 29/07/20 17:19:35 GMT+4

Signed by: AVINYAN TIGRAN 3802890590

Տ. ԱՎԻՆՅԱՆ